2022, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (597)

Բրիտանյան Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առթիվ

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,

Նոր տարվա սեմին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ:

Ցավով ու դառնություններով լեցուն տարի ապրեցինք: Արցախյան աղետալի պատերազմի հետեւանքները, Հայաստան եւ Արցախ մեր հայրենիքի շուրջ ծավալվող բարդ ու մտահոգիչ գործընթացները, երկրում տիրող դժվարին իրավիճակը զրկել են մեզ առօրյա, ինչպես եւ ամանորյա բնական ուրախությունից:

Այդուհանդերձ, Նոր տարին դիմավորում ենք հույսով ու հավատով, որ վերակերտելու ենք հայրենական մեր կյանքը եւ միասնական կամքով ամեն ջանք ի գործ ենք դնելու՝ հանուն Արցախի մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության: Մենք Քրիստոսի հարությանը հավատացող ժողովուրդ ենք, դարերի հոլովույթում ցավը, տառապանքն ու մահը մեզ երբեք չեն հաղթել, վեր ենք հառնել Տիրոջ պարգեւած շնորհի զորությամբ, վաղվա օրվա հանդեպ լավատեսությամբ: Հավատում ենք, որ Աստծո ողորմածությամբ եւ մեր ժողովրդի հաստատակամ հանձնառությամբ փրկչական 2022 թվականը կկարողանանք դարձնել ազգօգուտ եւ հայրենաշեն իրագործումների տարի: Հայաստանի զորացման, Արցախի ազատ ու ապահով կյանքի, աշխարհասփյուռ մեր ժողովրդի վերելքի եւ հարատեւության ուղին մեր համախմբումն է ապագայի համընդհանուր տեսլականի շուրջ, ինչպես եւ՝ ազգային ու հոգեւոր արժեքների վրա խարսխված ապրելակերպն ու գործերը: Ամենուր, ի սեր հայրենիքի, վերատեսության ենթարկենք մեր ընթացքը, թոթափենք անհանդուրժողության եւ ատելության չարիքը, հրաժարվենք անպատասխանատու, ազգավնաս խոսքերից ու արարքներից, լինենք բարի, լինենք սիրով, լինենք միասնական, որպեսզի վերստին զգանք Աստծո շնորհաբեր ներկայությունը մեր կյանքում:

Մեր տարածաշրջանի բարդ զարգացումների եւ մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերների հանդիմա՝ հզոր հայրենիքի կերտման ձգտումներում չենք կարող հաջողել, եթե նախ չվերականգնենք վստահության մթնոլորտը, չվերահաստատենք մեր ներքին խաղաղությունը: Մեր նահատակ զավակների սրբազան հիշատակի առջեւ խոնարհումով ու երախտագիտությամբ եւ հայրենիքի ու ազգի հանդեպ մեր հերոսների անձնվիրումի ու սիրո օրինակով ամեն կարելին ի գործ դնենք երկրի ու պետության առաջընթացի, համայն մեր ժողովրդի բարօրության համար: Ամուր ու անսասան մնանք համազգային շահով առաջնորդվելու նախանձախնդրության մեջ, եւ Աստված մեզ համար պիտի աճեցնի արդարության պտուղները (հմմտ. Բ Կորնթ. Թ 10):

Տարեմուտի նվիրական այս պահին հրավիրում ենք բոլորիդ միասնաբար աղոթելու, որ Բարձրյալ Տիրոջ օրհնությամբ իրականություն դառնան մեր բարի ձգտումները անձնական, ընտանեկան, ազգային ու հայրենական կյանքում: Աղոթենք Հայոց բանակի, հայրենիքի սահմանները հսկող մեր զինվորների համար: Աղոթենք բոլոր նրանց համար, ովքեր իրենց ծառայության մեջ են դիմավորում Ամանորը: Աղոթենք նեղյալների, կարիքավորների, հիվանդների, հաշմանդամ դարձած, գերեվարված եւ անհայտ կորած մեր որդիների եւ նրանց վշտակիր ընտանիքների համար: Աղոթենք Սիրիայում, Լիբանանում եւ Իրաքում դժվարությունների մեջ ապրող մեր զավակների համար, որպեսզի Երկնավոր Տիրոջ զորակցությամբ հաղթահարվեն նրանց առջեւ ծառացած խնդիրները:

Հայցենք խաղաղություն ու անվտանգություն Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին, աշխարհասփյուռ մեր ժողովրդին եւ համայն աշխարհին: Եվ Աստված, որ … մեզ տվեց հավիտենական մխիթարություն եւ բարի հույս, իբրեւ շնորհ, թող մխիթարի եւ հաստատ պահի մեր սրտերը ամեն բարի խոսքի եւ գործի մեջ (հմմտ. Բ Թեսաղ. Բ 15–16): Թող Տիրոջ սերը, ողորմությունն ու օրհնությունը միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի: Բարի Նոր տարի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դասգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առթիվ

(Երեւան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, 6 հունվարի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Փառք ի բարձունս մեծիդ Աստուծոյ,
որ եկիր եւ փրկեցեր զտիեզերս Քոյով յայտնութեամբ»
(շարական Սուրբծննդյան):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբծննդյան տոնին «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» երկնաձայն ավետիսով Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ՝ եկեղեցում համախմբված բարեպաշտ հավատացյալներիդ, համայն մեր ժողովրդին եւ Աստվածորդու առջեւ խոնարհված հովիվների ու հրեշտակների հետ օրհնաբանում մարմնացյալ Փրկչին՝ ասելով. «Փառք բարձունքներում մեծդ Աստծուն, որ եկար եւ Քո հայտնությամբ փրկեցիր տիեզերքը»:

Քրիստոսի սուրբծննդյան հրաշազարդ խորհրդով այսօր փրկության հույսն ու շնորհն են վերստին իջնում արհավիրքներից ու աղետներից խռովահույզ աշխարհի վրա: Բեթղեհեմյան աստղի պայծառ շողարձակումով, մանուկ Հիսուսի ծննդյան շնորհով Բեթղեհեմ դարձած հոգիներից ցրվում է անհուսության խավարը: Աստված Իր միածին Որդու հայտնությամբ հրավեր է ուղղում ողջ մարդկությանը՝ իրենց սրտերը դարձնելու աստվածային անսահման սիրո հայտնության վկայարան, մեղքերից սրբվելու, վերափոխվելու եւ նորոգության միջոցով փրկվելու: «Հեռո՛ւ վանեցեք ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապականված է խաբեպատիր ցանկություններով. նորոգվեցե՛ք ձեր մտքով եւ հոգով ու հագե՛ք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու՝ արդարությամբ եւ ճշմարիտ սրբությամբ»,— հորդորում է առաքյալը (Եփ. Դ 22–24): Մարդու նորոգության ու փրկության ուղին Աստծո պատվիրաններով ապրելն է, մեղքի կապանքներից ազատագրումը, ինչը հաստատուն երաշխիքն է մարդկության հարատեւության եւ գրավականը հավիտենական երանության: Փրկիչ մեր Տերը, որպես Աստծո առ մարդն ունեցած անսահման սիրո եւ հոգատարության առհավատչյա, հավաստում է, որ աշխարհը կարող է վերափոխվել, տառապանքի ու անարդարության իրականությունը կարող է վերածվել երանության վայրի՝ ըստ Եսայի մարգարեի վկայության. «Դժվարին տեղերը պիտի դյուրին դառնան, եւ առապարները՝ դաշտեր: Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, եւ ամեն մի մարմնավոր պիտի տեսնի Աստծու փրկությունը» (Եսայի Խ 4–5): ➥ էջ 3

Սուրբծննդյան եւ Աստվածհայտնության տոնի Ճրագալույցը Ս. Գայանե վանքում

Հունվարի 5-ին, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում մատուցվեց Ճրագալույցի ս. Պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները եւ ուխտավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Փառեն արք. Ավետիքյանը: Նախ կատարվեց Երեկոյան ժամերգություն, այնուհետեւ ընթերցվեցին սուրբգրային հատվածներ, որից հետո Մայր Աթոռի միաբան սարկավագներից չորսն ընթերցեցին Դանիելի մարգարեությունը:

Սուրբ Պատարագի ընթացքում Փառեն սրբազանն իր քարոզում անդրադարձավ Քրիստոսի սուրբծննդյան խորհրդին: Սրբազան հայրը հաստատեց, որ Աստծու Որդին ծնվեց, մարմնացավ եւ խոնարհվելով դրվեց մսուրի մեջ՝ մարդկության փրկության համար: Փառեն սրբազանն ընդգծեց նաեւ, որ Քրիստոս Իր հայտնությամբ խաղաղություն բերեց աշխարհին, խաղաղություն, որը մինչեւ այդ եղած մարդկային խաղաղությունից միանգամայն տարբերվում էր:

Վերջում պատարագիչ սրբազանը պատգամեց ներկաներին, Աստծու մարմնացած Որդուն ընդունելով իրենց սրտերում, լցվել Քրիստոսի շնորհած խաղաղությամբ՝ ձայնակցելով հրեշտակներին. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Սուրբ Պատարագի ավարտին՝ նախատոնակի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ խորան եւ վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Քրիստոսին խորհրդանշող լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանությունը մեկնեցավ Վեհարանում, ուր Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց տարվա առաջին Տնօրհնեքը:

Հայրապետական ս. Պատարագ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Հունվարի 6-ին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ս. Պատարագ մատուցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում: Հայրապետական խաչվառազարդ թափորը, «Խորհուրդ խորին» շարականի հանդիսավոր երգեցողության ներքո, Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ս. Տրդատի մատուռից առաջնորդեց դեպի խորան: Պատարագին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ եւ վանական խորհրդի ատենապետ Մուշեղ եպս Բաբայանն ու ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի դեկան եւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանը: Խաչի այս տարվա կնքահայրն էր 1990–94 թթ. արցախյան գոյապայքարի ազատամարտիկ, արցախյան 44-օրյա պատերազմում մարտիրոսված զինվորի հայր, հայ երգիչ, երգահան, ՀՀ վաստակավոր արտիստ Դավիթ Ամալյանը:

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» հրեշտակաբարբառ ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը եւ տոնի առիթով հղեց իր պատգամը (*տես էջ 1*):

Պատարագի սրբազան արարողության ավարտին կատարվեց Ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ սրբալույս մյուռոնով օրհնեց ջուրը:

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը դարձյալ իր օրհնությունն ու սուրբծննդյան կենարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դասգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առթիվ

➥ էջ 1

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, սուրբծննդյան հրեշտակաձայն ավետիսը այս օրերին՝ աղետալի պատերազմի կորուստների ցավով մորմոքվող, բեկված ու տագնապած, անորոշություններով անհանգիստ մեր սրտերին մխիթարություն ու սփոփանք է բերում, որ Տիրոջ փրկարար շնորհներով զորանանք, հավատով փոխակերպվենք եւ հույսով հաղթանակենք: Այսպիսի ոգով ու ընթացքով, անտարակույս, պիտի կարողանանք հաղթահարել պատուհասներն ու նեղությունները եւ հզորանալ որպես ժողովուրդ ու պետություն, հայրենիք եւ սփյուռք: Մեր հայրերը մեզ ուսուցանել են, որ աննկուն լինենք աղետների ու փորձանքների դեմ, թույլ չտանք, որ մեզ պարտության մատնեն հոգսերն ու կարիքները, հայրենիքի ապագայի հանդեպ տագնապները: Թե՛ հայրենիքում եւ թե՛ աշխարհասփյուռ մեր համայնքներում լինենք միաբան ու միասնական: Մեր անմիաբանությունն ու անհամերաշխությունը ծնունդ են տալու նոր կորուստների՝ ոտնակոխ անելով մեր մեծ ու փոքր հաղթանակները: Ներկայիս բարդ իրադրության մեջ հարկ է, որ սթափվենք, մերժենք Աստծուց մեզ հեռացնող ընթացքները եւ մեր կյանքն ամրորեն խարսխենք դարերի փորձություն անցած, մեր ժողովրդի հարատեւությունը երաշխավորած ազգային եւ հոգեւոր արժեքների վրա: Ամենքս սրբազան պարտք ունենք հայրենիքի համար նահատակության պսակն ընդունած մեր զավակների հիշատակի առջեւ՝ անձնուրաց ջանքեր ներդնելու հանուն հայրենի մեր երկրի, հանուն Արցախի ազատ կյանքի, հանուն հայոց պետականության անսասանության ու ազգային մեր ինքնության անխաթար պահպանության: Միշտ հիշենք՝ հայրենիքի շահը վեր է ամենից, մեր ժողովրդի ազատ ու ապահով կյանքը՝ առաջնահերթություն: Հզոր ու շեն հայրենիքի տեսլականի իրագործումը պահանջում է հանձնառության եւ անձնազոհության ոգի ու գիտակցություն, ազնիվ ու արդար գործելակերպ եւ հոգեւոր, բարոյական արժեքների վրա հիմնված կենսակերպ: Այդ առաքելությունը հնարավոր է իրականություն դարձնել մեր Տիրոջ լուսավոր օրինակով, որ, ըստ Իր խոսքի, չեկավ պաշտոն, ծառայություն եւ պատիվ ընդունելու, այլ ծառայելու (Մատթ. Ի 28): Ամեն մի պաշտոն եւ իշխանություն հասարակական, քաղաքական կամ պետական ոլորտում պետք է ծառայի երկրի առաջընթացին, ընդհանուրի բարեկեցությանն ու ապահովությանը, ինչպես բարեպաշտ ընտանիքում: Երբ պաշտոնը դաղարում է սպասավորություն ընկալվելուց, դառնում է պատճառ կամայականությունների, չար ու անարդար գործերի: Մինչ ազգաշահ ու հայրենանվեր բարի գործերով, միմյանց հանդեպ հոգածություն, սեր ու խնամք ցուցաբերելով է, որ ուժ ու զորություն կունենանք նեղություններն ու դժվարությունները հաղթահարելու, երկիր շենացնելու: Փրկչի սուրբծննդյան խորհրդով նորոգված կյանքով, հավատում ենք, կարող պիտի լինենք կերտելու նոր իրականություն, որտեղ գերակա կլինեն փոխհասկացողությունն ու համերաշխությունը, ուղղամտությունն ու հայրենանվիրումը. նոր իրականություն, որտեղ յուրաքանչյուր հանձնառություն միտված կլինի մեր ժողովրդի իղձերի ու ձգտումների իրագործմանը: Այս տեսլականով եւ Քրիստոսի պարգեւած փրկության շնորհով, սիրելի՛ հավատացյալներ, վերափոխենք մեր կյանքի ընթացքը եւ միշտ քայլենք վերելքի ու սիրո կենարար ճանապարհով:

Սուրբծննդյան եւ Աստվածհայտնության այս հոգեպարար օրն աղոթենք միասին, որ Բարձրյալն Աստված օրհնի, խաղաղ պահի ու պահպանի հայրենի մեր երկիրը եւ աշխարհը համայն: Աղոթենք, որ մեր հայրենիքը դառնա մսուր աստվածային ներկայության, եւ մեր ժողովրդի զավակների հոգիները զորանան հավատով ու լավատեսությամբ: Թող Տերն Իր ամենախնամ Սուրբ Աջի օգնականությամբ մեզ առաջնորդի ընթանալու հավատո բարի գործոց շավիղներով եւ փառաբանելու Իր Սուրբ Անունը այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Զեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորաօծ քահանաներին

Հունվարի 11-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի առաջնորդությամբ ընդունեց 2021 թվականի նոյեմբերի 21-ին Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում քահանայական կոչմանն արժանացած եւ Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջան անցած նորաօծ տասնմեկ քահանաներին:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով նորաօծ քահանա հայրերին, շնորհավորեց նրանց՝ ձեռնադրության առիթով:

Ամենայն Հայոց Հայրապետը, անդրադառնալով քահանայական ծառայության կարեւորությանը, փաստեց, որ եկեղեցականի առաքելությունը հատկանշական է զոհողությամբ, հնազանդ ոգով եւ իր կոչմանը հավատարիմ լինելու բարձր գիտակցությամբ: Հայոց Հովվապետը հաստատեց նաեւ, որ նորաօծ քահանա հայրերն իրենց հովվական ծառայության մեջ կհանդիպեն բազմաթիվ դժվարությունների եւ մարտահրավերների, սակայն իրենց զորավոր հավատքով առ Աստված, խոհեմությամբ եւ համբերությամբ պետք է հաղթահարեն դրանք՝ արդյունավետ դարձնելով հոգեւոր սպասավորությունը Մայր Եկեղեցու անդաստանում:

Վեհափառ Հայրապետը հորդորեց քահանա հայրերին լինել ամուր իրենց կոչման մեջ, չընկճվել, հույսով, հավատքով եւ անձնդիր նվիրումով շարունակել ծառայել հավատավոր հոտին:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց քահանաներին եւ նրանց ընծայեց ձեռաց խաչեր, Մաշտոց ծիսարաններ եւ ս. Հաղորդության մասնատուփեր:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի դաշտոնեությանը

Հունվարի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ամանորի եւ Սուրբծննդյան տոների առիթով հանդիպեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխարհական աշխատակիցների հետ:

Միասնական աղոթքից հետո Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը ներկաների անունից շնորհավորեց Նորին Սրբությանը բերկրաշատ տոների առիթով՝ վստահեցնելով, որ Մայր Աթոռի պաշտոնեությունը պիտի շարունակի լծակից լինել Հայոց Հայրապետին՝ ազգանպաստ եւ եկեղեցաշեն ծրագրերի իրականացման գործում:

Պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց Մայր Աթոռի համակարգչային եւ ինժեներատեխնիկական սպասարկման բաժնի տնօրեն տիար Սմբատ Մարգարյանը:

Այնուհետեւ Ամանորի եւ Սուրբծննդյան տոների առիթով ներկաներին շնորհավորեց եւ իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունն իր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց Մայր Աթոռի աշխատակազմին՝ մանավանդ հետպատերազմյան այս դժվարին շրջանում նվիրումով, սիրով եւ նախաձախնդրությամբ իրենց պարտականություններն ու աշխատանքներն իրականացնելու համար, որի արդյունքում Հայոց Եկեղեցին կարողանում է առավել արդյունավետ կերպով իրագործել իր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

Խոսելով հայ ժողովրդի ու հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների մասին՝ Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց Մայր Աթոռի աշխատակիցներին, Քրիստոսի պատգամներով զորացած, հույսով ու հավատքով դիմակայել բոլոր փորձություններին ու դժվարություններին:

Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձավ տարվա ընթացքում նախանշվող կարեւոր ծրագրերին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի աշխատակիցներին մաղթեց Աստծո օգնականությունն ու պահպանությունը՝ իրենց ստեղծագործական կյանքում առավելագույն արդյունքներ արձանագրելու ի սեր հայ ժողովրդի բարօր կյանքի, հայրենիքի զորացման եւ Եկեղեցու պայծառության:

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ 2021-ի թիվ 12–24

ԺԱ.

Հովհաննես Մելքոնյանն իր վիպակներում ու պատմվածքներում անդրադառնում է մեկը մյուսի հետ ներքին առնչություն ունեցող երեք հիմնական հարցադրման, որ ընդգրկում է ժամանակային երեք տարբեր փուլ եւ ստեղծում համապատասխան հերոսներ: Այդ հարցադրումները, ժամանակային փուլերն ու հերոսների տեսակները գեղարվեստական մշակման են ենթարկվում 20-րդ դարի սկզբի հայ ժողովրդի ազգային ողբերգության, պատմական հայրենիքի կորստի, Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ ժամանակակից կյանքի նյութի յուրացմամբ: Այդ ամենի վկայությունն են նրա «Իմ Մելքոն պապը», «Քարավան», «Ցրոնք արվարձանը», «Ընթրիք հինգ հոգու համար» վիպակները, «Հարցաքննություն» վեպը եւ մի քանի պատմվածքներ:

Նյութի, ժամանակաշրջանի եւ հերոսների ընտրության տեսակետից որոշակի առնչություններ կան Մելքոնյանի «Քարավան», «Իմ Մելքոն պապը» վիպակների եւ Գալշոյանի «Կռունկ» ժողովածուի գործերի միջեւ: Սակայն այդ առնչություններն ընդհանուր կարգի են եւ լրացնում են մի մեծ պատմության տարբեր էջերը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ պատմական հայրենիքի կորստի, հեռվում մնացած ծննդավայրի կարոտի եւ ընդհանրապես 20-րդ դարի տասական թվականների հայկական կյանքի գեղարվեստական պատկերումն զգալի տեղ ունի արդի հայ գրականության մեջ՝ հավասարապես թե՛ արձակում, թե՛ պոեզիայում:

Նշված վիպակներում Առաջին համաշխարհային պատերազմի տեսադաշտում ցուցադրվում են ազգային կյանքին յուրահատուկ պատկերներ՝ գաղթ, կոտորած, հարազատների կորուստ, փրկության ուղիների որոնում: Մելքոնյանը ցույց է տալիս համազգային կյանքի հավասարակշռության խախտումը եւ ապա պատկերում այդ դժվարին դրությունից դուրս եկող քարավանների ճակատագիրը:

«Քարավան»-ը 300 գաղթական հայի փրկության պատմությունն է: Եվ եթե օտար ու անհյուրընկալ ճանապարհներին դեռեւս կա մի բան, որ կենսունակ է պահում մարդկանց ու ջերմացնում նրանց հոգիները, անցած օրերի կարոտն է, որ աներեւակայելի կորուստների մեջ գոնե հիշատակներով սփոփում է մարդկանց: Ամեն ինչ կորստի մատնած մարդիկ ճգնում են ստեղծել մի կայուն վիճակ եւ ապրելու բնազդային զգացողությունը փոխարինել գիտակցական կենսազգացողությամբ: Պարտությունը եւ կորուստը դառնում են փաստ, կարոտն ապրեցնում է, բայց ոչ թե ներկայով, այլ անդառնալի անցյալով: Սակայն այս ամենը չի նշանակում, թե կյանքն ընդհատվում է, տվյալ վիճակը մղում է մաքառումների, բարոյական անպարտությունն ու անկոտրում կամքը փրկության դռներ են բացում:

Կոտորածի ու գաղթի պատկերներ են ներկայացվում նաեւ «Իմ Մելքոն պապը» վիպակում: Կրկին ելման կետը նույնն է. «— Ինչ կա... — Մահ, ավեր, կոտորած, աքսոր...»: Եթե նախորդ վիպակում այս նյութն արծարծվում էր լայնքով, կերպարների բազմազանությամբ, ապա այստեղ ստանում է ավելի որոշակի անհատական լուծում: Առաջ է մղվում Մելքոնի կերպարը, որի զարգացումը դիտվում է ազգային-քաղաքական իրադարձությունների լայն տեսադաշտում:

Մելքոնյանի՝ նշված վիպակների հերոսները՝ Պետրոս Աջապանյանը, Ավետիք Զրանյանը, Բերբերյանը, Զարմայրը, Մելքոնը եւ ուրիշներ, դառնում են 1910-ականների հայկական խառն ու հակասական կյանքի բնորոշ ներկայացուցիչները գրականության մեջ:

«Ցրոնք արվարձանը» վիպակում հեղինակը ներկայացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ թիկունքում մնացած քաղաքի արվարձաններից մեկի բնակիչների կյանքը եւ նրանց հոգեբանության ու կենցաղի մեջ կատարվող աստիճանական տեղաշարժերը: Պատերազմական վիճակը մարդկանց աստիճանաբար հասցնում է ահավոր մի գերլարվածության, որի ճնշման պայմաններում շատ բան սկսում է վերաիմաստավորվել, մշակվում են բարոյական նոր չափանիշեր, նոր հայացք ապրած եւ ապրվելիք տարիների նկատմամբ: Խախտվում է կյանքի հավասարակշռությունը, մարդիկ նոր ստեղծված վիճակների մեջ աստիճանաբար վերափոխվում են, բացահայտում իրենց էության բազում թաքնված ծալքեր, ինչով էլ կյանքում ձեւավորվում են նոր հարաբերություններ: Դա արդեն գոյավիճակի որոշակի լարվածության հետեւանքով խախտված հավասարակշռության եւ փոխակերպված կյանքի կայունացման նոր դրություն է: Մելքոնյանն ստեղծում է կյանքի հին վիճակներից դուրս եկած եւ նոր վիճակների մեջ իրենց հաստատել փորձող հերոսներ: Դա գոյության ամենադրամատիկ պահերից մեկն է: Եղբայրը կողոպտում է եղբոր հիշատակը, կինն ածուրդի է հանում հավատն ու սերը, սպասումը քարացնում է մարդկանց հոգիները, վիշտը գունազրկում է բոլոր երազանքները, եւ ամեն ինչ գտնում է իր արդարացումը, քանի որ պատերազմ է: Զորավարժություններ անող սկսնակ զինվորների կրակոցների պատճառով սարյակներն այլեւս քաղաք չեն գալիս, հացի հերթերում ցրտից չսառչելու համար մարդիկ իրենց փոխարեն նշան արած քարեր են դնում, որոնք կարծես տապանաքարեր լինեն... եւ այդ ամենը դառնում է սովորական:

Մելքոնյանը հոգեբանական հիմքերի վրա է տեղափոխում պատերազմը, այդ տեսանկյունից հայտնաբերում կյանքի նոր վիճակներ եւ այդ վիճակների մեջ գործող հերոսներ:

Ժամանակակից կյանքի նյութով գրած «Հարցաքննություն» վեպը եւ «Ընթրիք հինգ հոգու համար» վիպակն ունեն հարցադրման ընդհանրություն, որ դրսեւորվում է մեր իրականության որոշ շերտերին բնորոշ յուրահատկությունների գեղարվեստական յուրացմամբ ու հեղինակային վերաբերմունքով: «Հարցաքննություն» վեպում խոստովանության միջոցով բացահայտվում է երկու տարբեր պատմություն, դատարկվում են թաքնված գաղտնիքները, եւ ստեղծվում են մերկ հոգու տեր մարդկանց կերպարներ, որոնք կյանքի բերումով դարձել են հանցագործ: Մարդկանց կենսագրությունը կազմող ներքին գաղտնիքների, հոգեկան վիճակների, մանրուքներից ձեւավորվող առօրյայի մանրամասն դատաքննչական վերլուծությամբ բացվում են նոր շերտեր, եւ գրականություն բերվում կյանքին բնորոշ նոր տվյալներ: Մեհենդակ Էսքիջյանը դիահերձող է՝ տարօրինակ հակումների տեր մի անձնավորություն, ով սուսուփուս, մեկուսի, ստվերի նման ապրում է լռության մեջ: Եվ ահա նրա կյանքը դրվում է խոշորացույցի տակ. կին, ամուսնություն, բաժանություն, ի վերջո, աննկատ ու պատահական հանցագործություն, որ գուցե նաեւ հանցագործություն էլ չէ: Նոր տան փոստարկղում նա փող է գտնում, որ եկել էր հին տանտիրոջ՝ դատավորի հասցեով՝ որպես կաշառք, ու դարձյալ լռություն, աննկատ տեղերում թաքցված դրամ, անքուն գիշերներ, հիվանդագին ապրումներ եւ ծեծ՝ դրամի հասցեատիրոջ կողմից, ինչը եւ նրան հասցնում է մահվան: ➥ էջ 6

ՏՅԱՌԸ

Վատոնի մեթրոպոլիտ ՍՈՒՐՈԺՍԿԻ

Մենք այսօր տոնում ենք Տյառնընդառաջը: Այսօր հանդիպելու ենք Տիրոջը մի խորագույն եւ շնորհընկալ ուրախությամբ, որով Սիմեոն Ծերունին Նրան իր ձեռքերին վերցրեց եւ Նրանում տեսավ բոլոր հին մարգարեությունների իրականացումն այն մասին, որ կգա այն օրը, երբ մարդու եւ Աստծո մինչեւ եղած երկպառակությանը վերջ կտրվի, երբ Ինքը՝ Աստված, մարմին առած կիջնի մեզ մոտ՝ որպես մեր Փրկիչ՝ հաշտեցնելով մեզ մեր Աստծո եւ մեր Հոր հետ՝ Իր մարդեղությամբ, Իր կյանքով, Իր ուսուցումներով եւ խաչի վրա ընդունած Իր մահով: Տյառնընդառաջի տոնի մեջ միավորվում են միաժամանակ եւ ուրախությունը, եւ Քրիստոսի խաչի վրա մահն ընդունելու սպասման ցավը:

Լինում են տոներ, երբ հոգիդ այնպես է համակվում ցնծությամբ, որ ձեռքդ չի բարձրանում առօրյա որեւէ գործ անելու, բայց լինում են նաեւ այնպիսիները, որ ձեռքդ չի բարձրանում, որովհետեւ սիրտդ լիքն է կամ վշտով եւ կամ սրբազան սարսափով: Տյառնընդառաջն այդ երկուսն էլ իր մեջ պարունակում է: Քրիստոսին դիմավորում է Սիմեոն Աստվածավախը, մի ծերունի, որ իր կյանքն ապրել էր բարեպաշտորեն, ում Աստված խոստացել էր, որ նա մահ չի տեսնի, մինչեւ չտեսնի աշխարհի Փրկչին, որ գալու է աշխարհի հաշտեցման ու վերափոխման Իր գործն անելու: Սիմեոն Ծերունու հետ միասին այդ ուրախության մասին է ավետում նաեւ Անն մարգարեուհին: Կատարվեց ոչ միայն Հին Կտակարանի, այլեւ աշխարհի սկզբից սկսած ողջ մարդկության, նրա ցանկությունների, կարոտի, հույսի սպասումն առ այն, որ երբ գա Տերը, արդեն չի լինի Նրա ու մեր միջեւ առկա անանցանելի անդունդը: Այդ բարեպաշտները ցնծում էին նաեւ նրա համար, որ ոչ միայն անցյալը, այլեւ ապագան է արդարացված, եւ այն շողում է հույսով ու հրճվանքով:

Եկավ Տերը, եւ եկավ փրկությունը, եկավ հույսը, որին ոչ մի երկրային վիշտ, ոչ մի սարսափ չի կարող խամրեցնել, որովհետեւ Աստված արդեն մեր մեջ է: Քրիստոսը մեր մեջ է, եւ ո՛չ ոք այլեւս չի կարող մեզ ո՛չ Նրա ձեռքից խլել եւ ոչ էլ Նրա սիրուց հեռացնել:

Այս ամենով հանդերձ՝ Տյառնընդառաջի տոնն իր մեջ ներառում է նաեւ սրբազան վշտի ու սարսափի խոր կնիքը: Նույն Սիմեոնը, որ վկայեց մարդեղացած Տիրոջ մասին, Տիրամորը հաղորդեց նաեւ, որ նրա սրտի միջով սուր է անցնելու, որ նա այնպիսի ցավ կունենա, այնպիսի տառապանք, ինչպիսին ոչ ոք աշխարհում չի տեսել: Այդ ժամանակ Տիրամայրը չգիտեր, թե ինչպիսին է լինելու այդ սարսափը, այդ տառապանքը. միայն այն ժամանակ, երբ նա կանգնած էր Տիրոջ խաչի առաջ, ապրեց այդ ամենն ամբողջությամբ: Երեւակայեք վիշտն ու տառապանքը մի մոր, որ տեսնում է անարդարացի կերպով խաչին գամված իր Որդուն այն մարդկանց ատելության պատճառով, որոնց համար Նա ապրեց, քարոզեց, որոնց համար Աստված մարդեղացավ: Նա տեսնում էր, թե ինչպես ժամեր շարունակ իր Որդուց հոսում էր կյանքը. ի վերջո նա մահացած Որդուն իր գիրկն առավ: Այդ ամենի մասին նրան Սիմեոն Աստվածավախը զգուշացրեց: Ահա այդ պատճառով է, որ տոնելով այս օրը՝ ցնծում ենք, որովհետեւ եկել է մեր փրկությունը, բայց եւ հիշում ենք նաեւ Տիրամոր սրտակեղեք վիշտը: Որքան մայրեր կան աշխարհում, որ կարող են այդ վիշտը հասկանալ, մայրեր, որոնց զավակները՝ որդիները, դուստրերը, զրկվել են կյանքից հիվանդությունների կամ էլ դաժան պատերազմների պատճառով:

Մեզնից յուրաքանչյուրը ծնվելուց հետո բերվում է, կամ հետո ինքն է գնում տաճար, որպեսզի մկրտվի եւ կանգնի Աստծո առաջ՝ անդամագրվելով եկեղեցուն: Այդ մանկան կամ մեծահասակի անդամագրումը եկեղեցուն պատկերն է ժամանակին Երուսաղեմում տեղի ունեցածի: Ինչպես Աստծո Որդին, որ դարձավ նաեւ մարդկության Որդին, կանգնեց Հոր առաջ, այնպես էլ մենք, երբ մկրտվում ենք, հաղորդվում ենք խաչյալ ու հարուցյալ Քրիստոսի հետ: Մեզանից յուրաքանչյուրը, որ բերվում կամ գնում է տաճար, ընդմիշտ ու անսակարկ դառնում է Աստծո սեփականությունը եւ ոչ թե լոկ «Աստծո զավակը»: Եվ Աստծո որդիներ ու դուստրեր դարձածները բռնում են այն ուղին, որով անցավ մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

Եթե մենք ուզում ենք հասկանալ, թե ինչ է նշանակում մինչեւ վերջ լինել քրիստոնյա, հիշենք Պողոս առաքյալի ասույթներից, խոսքերից մեկը:

Երբ Հակոբոսն ու Հովհաննեսը Երուսաղեմի ճանապարհին, ուր Քրիստոսը պետք է չարչարանքներ կրեր ու մահանար, Նրան հարցրեցին, թե կարո՞ղ են Իր հաղթանակից հետո իրենք նստել Նրա թագավորական գահի աջ ու ձախ կողմերում, Նա նրանց պատասխանեց հարցումով. *«Կարո՞ղ եք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ»* (այսինքն՝ կարո՞ղ եք հաղորդվել այն տառապանքներին, որը ես ճաշակելու եմ), *կարո՞ղ եք մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ»* (Մարկ. Ժ 38) (այսինքն՝ խորասուզվել այն տառապանքների սարսափում, որը բաժին է ընկնելու ինձ): Եվ առաքյալները պատասխանեցին. «Կարող ենք»: Այդպես էլ մենք մկրտվելով կանգնում ենք Նրա առջեւ՝ հույսով, որ ժամանակին կկիսենք Նրա հավիտենությունը, հավերժական կյանքի հաղթանակը: Ուստի պետք է պատրաստ լի-

Բիոէթիկայի եւ իրավագիտության զարգացման հեռանկարները 21-րդ դարում

Ուստի հառնիր, տեր,
որպեսզի հանկարծ աջն հողողենի
Զզորավորվի քոնի համեմատ,
Ջանքերը մարդկանց չհավասարվեն
Քո աստվածային ողորմության հետ:
Գրիգոր Նարեկացի

Բիոիրավունքի համակարգը

Հետմոդեռնիզմը եւ մարդու մարմինը

Հետմոդեռնիստական պայմաններում բիոբժշկության նորարարությունները մեկնաբանվում են սպառողական հասարակության բարոյականության տեսանկյունից, որտեղ մարդկային կյանքի իմաստն իջեցվում է նյութական բարիքներ ձեռք բերելու եւ հեդոնիզմի (հաճույքի գերակայություն) աստիճանին(*ՀՌՀ-ի պետության եւ իրավունքի տեսության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Ղամբարյանի ուսանելի հոդվածից մեջբերված այս հատվածները, վստահ ենք, ոչ միայն հետաքրքրություն, այլեւ այդ թեման ավելի խորությամբ յուրացնելու ձգտում կառաջացնեն ընթերցողների շրջանում*): Ժ. Բոդրիարը խոսում էր մարմինն ազատականացնելու, մարմնի պաշտամունքի եւ սեռական ազատության մասին: Մարմնի երկրպագման դրսեւորում էր համարում սպորտը քարոզելու աղմուկը, կոսմետիկ միջոցների եւ մարմնի խնամքի այլ միջոցների գովազդը: Նա նշում էր, որ մարմնի պաշտամունքը վկայում է այն մասին, որ մեր ժամանակներում այն զբաղեցրել է հոգու տեղը (*Бодрийяр Ж., Общество потребления. http://gtmarket.ru/laboratory/basis/3464/3471* (26.01.2016)):

…Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արեւմտյան հասարակության մեջ ընդհանրացվեց այն գաղափարը, որ բարոյական փոխգործակցության կարեւորագույն տարրն անհատի ինքնավարությունն է, որն ամերիկյան ընտանիքի վերափոխման, ֆեմինիստական շարժման առաջացման, ինչպես նաեւ բժիշկ–հիվանդ հարաբերությունների վերաձեւակերպման հիմք դարձավ: Բարոյագետ Ժերարդ Դվորկինը, բուժօգնության բնագավառում ամփոփելով բժիշկ–հիվանդ փոխհարաբերությունների բնույթը, եզրակացրեց, որ «բժշկի որոշումը լավագույնն է» հասկացությունն իր տեղը զիջել է բուժօգնության բնագավառում հիվանդի որոշման կարեւորմանը՝ «սա իմ մարմինն է» արտահայտության ձեւակերպմամբ (*Gerald Dworkin, Can You Trust Autonomy? 33 Hastings Ctr. Rpt. 42 (2003), ըստ Bioethics and the law / Janet L. Dolgin, Lois L. Shepherd. [2nd ed.] 2009. p. 46*):

Մարդը միշտ էլ ուշադրություն է դարձրել իր մարմնին, սակայն այսօր մարդու մարմինը դառնում է պաշտամունքի առարկա: Փիլիսոփաները նշում են, որ մարդու մարմնի ֆենոմենի մասին են վկայում առողջական խնդիրների սրացումը, որն առավել արդիական է խոշոր քաղաքներում, հոգեկան շեղումները, նեւրոզները, սրտանոթային հիվանդությունները, թմրադեղերից եւ ալկոհոլից կախվածությունը, ժամանակակից աշխարհում մարդկային անհատականության արժեքի բարձրացումը եւ մարմնի՝ որպես անձնային ինքնադրսեւորման միջոցի ընկալման սրացումը, ժամանակակից քաղաքակրթության մեջ սեռական վարքագծի եւ սեռական մշակույթի հիմնախնդրի սրացումը: Էրոտիզմը վաղուց դադարել է լինել մարդու մասնավոր կյանքի մաս, զանգվածային լրատվության միջոցներով այն դառնում է ագրեսիվ եւ պարտադրված, ժամանակակից քաղաքակրթության մեջ մարդու մարմնի՝ որպես խորհրդանշային արժեք կրողի ընկալումը. նոր սոցիալական խմբերը եւ երիտասարդական միավորները՝ պանկեր, բայկերներ, սքեյթբորդիստներ, նուդիստներ, միասեռականներ եւ այլն, ձգտում են հաստատել իրենց կարգավիճակը եւ արտաքին հատկանիշները, էվթանազիայի, վերարտադրողական տեխնոլոգիաների, աբորտի, կլոնավորման, օրգանների փոխպատվաստման, բժշկական օրենսդրության հարցերը եւ այլն (*Лохов С. А., Феномен тела как проблема философской антрипологии. Автограф. дис. канд. философ. наук. М.: 2003. с. 3–4*):

Գիտության բնագավառում ժամանակակից բացահայտումները եւ նորարարությունները նախադրյալներ են ստեղծում վերակառուցելու իրավական եւ բարոյական ավանդական արժեքային կողմնորոշումները եւ դիրքորոշումները: Նման վերափոխումներն իրենց ազդեցությունն են թողնում նաեւ գիտության ճյուղերի եւ գիտակարգերի մերձեցման (կոնվերգենցիայի) վրա. ժամանակակից գիտական հետազոտություններին ներհատուկ են միջճյուղային հետազոտությունները: Ասվածի համատեքստում բացառություն չեն նաեւ իրավագիտությունը եւ բժշկությունը, որոնց խաչման կետում են գտնվում բժշկական իրավունքը եւ բիոէթիկան:

Հիմնական հասկացություններ

Բիոէթիկան համեմատաբար նոր միջճյուղային գիտություն է եւ գիտակարգ, որի հասկացության ապարատը դեռեւս հստակեցված չէ, հստակ չէ նաեւ նրա ուսումնասիրության առարկան կազմող հարցերի շրջանակը (*տես Դավթյան Ս. Հ., Բիոէթիկա: Դասագիրք, Եր.: Երեւանի պետ. բժշկ. համալս., 2009, Կենսաէթիկայի հիմնահարցեր: Ուսումնաօժանդակ ձեռնարկ: Կազմողներ՝ Հրաչ սրկ. Սարգսյան, Վարդան սրկ. Ասլանյան. Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2015*):

Ինչպես է մեկնաբանվում «բիոէթիկա» հասկացությունը, ինչ հարցեր է այն ուսումնասիրում: Բացատրական բառարաններում բիոէթիկան դիտվում է սոցիալական փիլիսոփայության ուղղություն, որի խնդիրն է ուսումնասիրել կենսաբանական գիտությունների բարոյաիրավական, սոցիալ-քաղաքական եւ մարդաբանական տեսանկյունները:

«Բիոէթիկա» եզրույթը կենսաբանների կողմից մշակվել է 1970-ականների սկզբին՝ հրատապություն ներկայացնող երկու թեմաների հանրային եւ մասնագիտական քննարկումները խթանելու նպատակով՝ 1. երկրագնդի էկոլոգիան պահպանելու պատասխանատվությունը, որով պայմանավորված են մարդկային կյանքը եւ կյանքն ընդհանրապես, 2. բնական գիտությունների արագ առաջխաղացումների հնարավոր հետեւանքները՝ հաշվի առնելով մարդկային բնույթի հնարավոր փոխակերպումները (*Encyclopedia of bioethics / Stephen G. Post, editor of chief. 2004. 2-rd ed. p.12*): «Բիոէթիկա» բառը շրջանառության մեջ է դրել ամերիկացի ուռուցքաբան Վ. Փոթերը, որը 1971 թ. հրապարակեց «Բիոէթիկա. Կամուրջ դեպի ապագա» գիրքը:

Ընդ որում՝ անգլիալեզու աղբյուրներում նշվում է, որ Կոնգրեսի գրադարանի կատալոգում «բիոէթիկա» բառի առաջին հղումը 1973-ին արվել է Դ. Կալահանի «Բիոէթիկան որպես գիտակարգ» հոդվածին: Ոմանք բառի առաջին գործածումը վերագրում են Մարդու վերարտադրողականության եւ բիոէթիկայի Ջոզեփ եւ Ռոուզ Քենեդիի անվան ինստիտուտին (*Bioethics and the law / Janet L. Dolgin, Lois L. Sheperd. [2nd ed.] 2009. p. 7*), որը հիմնադրվել է 1971 թ.:

Վ. Փոթերը գիտաժողովներից մեկում նշել է. «Բիոէթիկան նոր բարոյագիտական ուսմունք է, որը միավորում է խոնարհությունը, պատասխանատվությունը եւ ձեռնհասությունը, այն միջճյուղային գիտություն է, որը միավորում է բոլոր մշակույթները եւ ընդլայնում է «մարդասիրություն» բառի նշանակությունը» (*Potter V. R. Bioethics: Bridge to the Future. Englewood Cliffs: Prentice-Hall, 1971*): Վ. Փոթերը, «բիոէթիկա» բառը գործածելով, փորձում էր շեշտել, որ մարդու գոյատեւումը պայմանավորված է կենսաբանական գիտելիքների վրա հիմնված էթիկայով, այսինքն՝ բիոէթիկայով: Այս հայեցակարգում ինտեգրվում են կենսաբանությունը եւ մարդկային արժեքները (*Peter J. Whitehouse The Rebirth of Bioethics: Extending the Original Formulations of Van Rensselaer Potter. The American Journal of Bioethics. Volume 3, Issue 4, November, 2003, p. 26–31*):

Ինչ հարցեր է ուսումնասիրում բիոէթիկան: Բիոէթիկայի զարգացման սկզբնական փուլի արդյունքներն արտացոլվեցին «Բիոէթիկայի հանրագիտարան» չորսհատորյակում, որտեղ քննարկվում էին 5 խումբ հարցեր: ➥ *էջ 8*

ԸՆԹԵՌՈՒՄ



նենք ասելու. «Պատրաստ ենք, Տեր, նաեւ այս աշխարհում կիսելու Քեզ բաժին ընկած երկրային ճակատագիրը, ապրելու արդարությամբ, հռչակելու ճշմարտությունը, մինչեւ խաչ սիրելու մերձավորներին մեր, պատրաստ ենք մեր կյանքը տալու հանուն ուրիշների, հանուն բոլորի:

Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, որ ճկռում է վասն մարդկային մեղքերի թողության:

Եվ որպեսզի դա իրականանա, պետք է հիշենք Պողոս առաքյալի խոսքերը. *«Ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ»* (Փիլիպ. Ա 21), եւ շարունակում՝ թե քանի որ իմ կյանքն օգտակար է, անհրաժեշտ է ձեզ համար, պատրաստ եմ դեռեւս ապրել այս աշխարհում: Մեզանից ո՞վ է կարող իր ողջ հոգով, ողջ մտքով ու սրտով, ողջ կամքով ու կյանքով ասել. *«Ինձ համար կյանքը Քրիստոսն է»*, եւ ոչ միայն այն իմաստով, որ Քրիստոսը մկրտության, խորհուրդների, ուսմունքների միջոցով, Իր մերձությամբ տալիս է ինձ նոր կյանք, այլեւ այն իմաստով, որ Քրիստոսի ապրած կյանքը դարձել է այժմ իմ նպատակն ու իմ կյանքի բովանդակությունը: Թերեւս սա է ճշմարիտ քրիստոնյայի նշանը: Եթե մենք կարողանայինք այդպես ապրել, կարողանայինք Քրիստոսի հետ լինել միակամ ու միասնական, Նրա հանդեպ ունենայինք լիակատար սեր, ապա կարող էինք մենք Պողոս առաքյալի պես ասել. *«Ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ»*, որովհետեւ ապրելով աշխարհում՝ ես բաժանված եմ Քրիստոսից, իսկ իմ կյանքի բոլոր ցանկությունները, բոլոր ձգտումները միտված են նրան, որ տեսնեմ Նրան դեմ առ դեմ, որ մշտապես լինեմ Նրա հետ, որ ոչինչ ինձ չբաժանի Նրանից:

Եվ այդ ամենով հանդերձ՝ Պողոս առաքյալը, որ Քրիստոսից սովորեց սիրել, սիրել մերձավորներին ու հեռավորներին, ընկերոջն ու թշնամուն, հետապնդողին ու պաշտպանողին, ասում է, թե՝ քանի որ դա ձեզ համար կարեւոր է, կմնամ ապրելու այս հողի վրա: Այդպես էլ մենք պետք է ողջ հոգով, կյանքի ողջ ուժով ձգտենք Քրիստոսի հետ հանդիպումին եւ պետք է ընդունակ լինենք ասելու նաեւ. «Այո՛, սակայն ես գործեր ունեմ աշխարհում, ես պետք է իմ կյանքի մաքրությամբ, լույսով, իմ արարքների ճշմարտությամբ, իմ խոսքերի անկեղծությամբ, իմ ողջ գոյությամբ լինեմ Քրիստոսին վկայողը, չնայած ամբողջ հոգով երազում եմ լինել Նրա հետ, սակայն կմնամ այս որբ, թշվառ, դառն աշխարհում, որպեսզի լույս տամ նրան, հույս, ուրախություն, սեր տամ նրան:

Այս տոնը, որը մեզ հիշեցնում է մեր եկեղեցականությունը՝ Քրիստոսի խաչի ճանապարհի եւ զոհաբերության լույսի մեջ, նորոգենք մեր ուխտը, որ տվեցինք մկրտվելիս, կրկին կանգնենք դեպի Քրիստոսը տանող ճանապարհին՝ նոր վճռականությամբ, նոր հույսով, եւ այլեւս չասենք, թե մենք տկար ենք, չունենք բավականաչափ ամրություն:

Տերը Պողոս առաքյալին, որ ուժ էր խնդրում, ասաց. *«Իմ շնորհը քեզ բավ է, որովհետեւ իմ զորությունը տկարության մեջ է ամբողջանում»* (Բ Կորնթ. ԺԲ 9): Եվ Պողոս առաքյալը բացականչեց. *«Եվ արդ՝ լավ է, որ ես պարծենամ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը»* (նույն տեղում): Իսկ մեկ այլ տեղում ասում է. *«Ամեն ինչ կարողանում եմ նրանով, ով զորացրեց ինձ»* (Փիլիպ. Դ 13):

Պողոսը մեզ նման էր՝ միս ու արյուն ունեցող մարդ, նա եւս վախենում էր, նա եւս ցավ էր ապրում, նա եւս պայքարում էր իր իղձերի ու հավատարմության համար: Նա հաղթեց եւ մեզ ասաց. *«Արդ՝ աղաչում եմ ձեզ, նմանվեցեք ինձ»* (Ա Կորնթ. Դ 16): Ի կատար ածենք այդ հորդորը, եւ օր օրի դառնանք նոր մարդ՝ ավելի խոր, ավելի կատարյալ, ինչպիսին մեր Տեր Քրիստոսն է, մեր Ուսուցիչը, մեր Փրկիչը: Ամեն:

Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

➥ *էջ 4*

Հեղինակը նրբերանգների ու մանրամասների մեջ հայտնաբերել է մարդկային կյանքը կազմող շարժումներ, վիճակներ, ապրումներ եւ այդ ամենի համադրությամբ ստեղծել հերոսի յուրահատուկ մի նկարագիր՝ հիվանդագին, կծկված, լռության ու մթության մեջ հոգեկան անդորր որոնող, արտաքին հարաբերություններից ու կապերից կտրված, դիակների հետ գործ ունեցող մեկը... Բնավորության հատկանիշեր, ինչը նոր կողմեր է բացահայտում մարդու էության մեջ:

Վեպի երկրորդ մասում շարունակվող այս խորացումները, մարդկային բնավորության նոր կողմեր լրացնելով հանդերձ, դառնում են ավելի խնդրահարույց եւ մարդու ներփակ հետազոտությունից վերաճում հանրային կարեւորություն ունեցող խնդիրների արծարծման:

Շահեն Արշակյանն այս անգամ քննում է Համազասպ Բժշկյանի գործը: Վերջինս ակամա հանցագործ է, ունի նախասիրություններ, սովորություններ ու հակումներ. նա բակում արծիվ է պահում ու նաեւ դրա մեջ է տեսնում կյանքի հետաքրքրությունը, անգամ՝ իմաստը: Սակայն մի օր թոռնուհին եւ նրա ընկերները տանը կերուխում անելուց հետո խոշտանգում են արծվին: Այդ տեսնելով՝ Համազասպ Բժշկյանը կատաղությունից խփում եւ վնասում է թոռանը՝ Աղավնի Բժշկյանին, նրա փեսացուին՝ Գաբրիել Մերկերյանին եւ էլի մեկին: Եվ ահա ծերուկը կանգնած է հարցաքննության առաջ:

Պապը կանգնում է թոռան դեմ. հարազատը չի հանդուրժում հարազատին, նյարդայնանում է նրա պահվածքից, վարքից, կենցաղից, բայց ոչ մի կերպ չի կարողանում ուղղել նրան, մինչեւ անգամ երբ դիմացինն իր թոռն է: Այս վիճակներում առաջացած ջղային գրգռվածությունը մնում է մարդու մեջ, դիտողությունները չեն օգնում, անհանդուրժողականությունը ներքուստ կուտակվում է եւ, ի վերջո, հարազատներին օտարում իրարից: Մելքոնյանի ներկայացրած վիճակի մեջ արդեն կա այդ խզումը. պապը եւ թոռը տարբեր մարդիկ են:

Վիպակի հանրային հնչեղությունը նրանում է, որ քննադատական եւ մերկացնող խոսք է ասվում երիտասարդ սերնդի այն ներկայացուցիչների հասցեին, որոնք վարում են պորտաբույծ կյանք, նստած են իրենց ծնողների, նաեւ ժողովրդի ուսերին, անկազմակերպ են, աննրբանկատ եւ իրենց հոռի բարքերով ապականում են մարդկանց կյանքը:



Հանրային բարքերի ժամանակակից վիճակը ներկայացնելու տեսակետից ուշագրավ է նաեւ «Ընթրիք հինգ հոգու համար» վիպակը: Հեղինակը ներկայացրել է դպրոցական հինգ ընկերների, ովքեր կյանքում ընթացել են տարբեր ճանապարհներով, հասել կեցության տարբեր աստիճանների: Ահա այդ հերոսներն իրենց մասնագիտությամբ եւ դիրքով՝ Նժդեհ Մալխասյան՝ անտառագետ, Գրիգոր Ժամկոչյան՝ ուսուցիչ, Վիրապ Մահիկյան՝ արվեստաբան, Մնացական Բեկյան՝ ավտոհանգրվանի տնօրեն, Արամ Կավկավյան՝ գինու գործարանի տնօրեն: Այս հերոսներից ամեն մեկը ներկայացնում է մարդկային հոգեբանության, բարոյականության եւ կյանքի հանդեպ վերաբերմունքի մի բնագավառ, որ բաժանվում է երկու մասի: Մի կողմից՝ ազնիվ աշխատանք եւ համեստ եկամուտներ՝ այդտեղից էլ կյանքի հանդեպ ունեցած վերաբերմունքի եւ մարդկային հոգեբանության ու բարոյականության մի տարբերակ, մյուս կողմից՝ հանրային դիրքի չարաշահում, անազնիվ եկամուտներ, կյանքն իրեն ծառայեցնող կուշտ մարդու սպառողական հոգեբանություն: Մարդկային նկարագրի այս տեսակները խիստ բնորոշ են մեր կյանքին եւ իրենց բնավորության հիմնական կողմով համապատասխանում են իրականությանը: Կյանքի փաստի ճշմարտացի վերարտադրումն ուղեկցվում է հեղինակային վերաբերմունքով, ինչը երեւում է ոչ թե անմիջական խոսքով, այլ հերոսների հանդեպ ձեւավորվող համակրանքով ու հակակրանքով: Համակրանքը Նժդեհի ու Գրիգորի կողմն է, ովքեր կարողացել են կյանքում պահպանել իրենց հոգու ազնվությունն ու նկարագրի մաքրությունը, հակակրանքը՝ Մնացականի ու Արամի, որոնցից ամեն մեկն իրենից ներկայացնում է աշխարհի շալակը բարձրացած մի աստիճանավոր թալանչի: Եկամտաբեր պաշտոն ունեցողների, ամեն ինչի՝ իրենց դիրքի ու կուտակածի տեսանկյունից նայողների եւ համեստ ու ազնիվ աշխատանքի տեր մարդկանց միջեւ, բնական է, պետք է տեղի ունենա բախում: Սակայն կյանքում առճակատումը բախման չի վերածվում, դառնում է հանդուրժողականություն ու հաշտվողականություն եւ միայն երբեմնակի ունենում ներքին դժգոհություններ: Հեղինակը վիպակում հարազատ է մնացել հանրային հոգեբանության այս սկզբունքին: Նժդեհը թեեւ զայրույթի նոպաներ է ունենում ընկերների ու նրանց նմանների դեմ (հիշատակելի է խորտկարանում Նժդեհին ծաղրելու եւ ստորացնելու տեսարանը), թեեւ ատամների արանքից ինչ-որ բառեր է շպրտում նրանց հասցեին, սակայն, ի վերջո, լռում է եւ, ներքին ընդվզումով հանդերձ, համակերպվում իր շրջապատին: Ժամհարյանի մեջ եւս կա այս երկվությունը, ինչը դառնում է նրա բնավորության հոգեբանական հիմքը. «Ինչ է պատահել, ինչ ենք մեկս մյուսից վախենում, հը՞, ինչի, մի բան մտածում, ուրիշ բան ասում, դիմացինին թուքումուր տալով՝ մեր մեջ հայիոյում եւ նույն պահին, նույն, նույն... երեսանց ժպտում: Ախր չի լինի, մեղք են մեր դեմքերը, չե՞ս նկատում, կամաց-կամաց դառնում են դիմակ»: Նժդեհի ու Ժամհարյանի ազնվությունն արդար լինելով՝ պարուրված է խեղճության քողով: Այս խեղճությունն էլ է հոգեբանական որակ եւ բնորոշ որակ: Կյանքը երբեմն այնպես է ստորացնում ու ծաղրում մարդկանց, այնպիսի շրջանակների մեջ դնում, որ նրանք կորցնում են իրենց համարձակությունը, կուլ տալիս ներքին զայրույթը, ճզմում բողոքի ձայնը եւ դառնում խեղճ ու վախվորած: Այս ազնիվ խեղճերի եւ լպիրշ համարձակների միջեւ խանգարված բարոյականությամբ կանգնում է արվեստի մեկնաբան Վիրապը:

Բավական է, ինչքան սպառողական հոգեբանության մարդկանց՝ զանազան թալանչիների, առեւտրականների, պետերի, մի խոսքով՝ հանրային կյանքում դիրքային առավելություն ունեցողների եւ այդ դիրքը չարաշահողների կերպարները դառնան ֆելիետոնի եւ «Ոզնու» ծաղրանկարների նյութ: Այդ նյութն իր մեջ լուրջ խնդիրներ է պարունակում եւ միանգամայն ճիշտ է վարվել Մելքոնյանը՝ իր վերջին երկու գործերում ներկայացնելով կյանքի այդ կողմերը:

Ուրիշ հարց, որ պետք է խոսել նյութի յուրացման գրական վարպետության մասին: Այս տեսակետից Մելքոնյանի նշված գործերում կան ձգձգված, երբեմն ավելորդ հատվածներ, միշտ չէ, որ հերոսները կերպավորվում են շարժման ու գործողությունների ընթացքում, պատումի մեջ իշխում են անհարկի նկարագրությունները:

Ժամանակակից բարքերի, մարդկանց մեջ ստեղծվող հարաբերությունների նոր կողմերի ներկայացման տեսակետից Մելքոնյանի «Հարցաքննություն» եւ «Ընթրիք հինգ հոգու համար» երկերը գրականություն են բերում նոր հերոսների, կյանքի նոր վիճակներ եւ, դրանով իսկ, ընդարձակում ժամանակակից արձակի կենսանյութի շրջանակները:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՊԻՂԱՏՈՍԸ

Սկիզբը՝ 2021-ի թիվ 24

Ամփոփում

Պիղատոսը պատրաստ էր Հիսուսին հանձնել առանց հարցաքննության: Նա փոխում է մտադրությունը: Հետաքննությունը կատարում է ամենայն մանրամասնությամբ: Այդ կտրուկ շրջադարձի մեջ առկա է Չարչարանքների պատմության արտառոց փաստերից մեկը:

Ինչո՞ւ տեղի ունեցավ այդ հանկարծակի շրջադարձը, որը զայրացնում է հրեաներին ու զարմացնում ընթերցողին: Խաչի վերեւում փակցրած տախտակի մասին Պիղատոսն ասաց . «Ինչ որ գրեցի, գրեցի» (Հովհ. ԺԹ 22): Ինչո՞ւ այդ ուրբաթ՝ արեւածագին, նա չասաց. «Ինչ որ խոստացա, կկատարեմ»:

Անհետեւողականություն կա այն պահի, երբ Պիղատոսը կնքում է համաձայնությունը, եւ այն մյուսի միջեւ, որն ինքն այլեւս հաշվի չի առնում դա: Բայց անհետեւողականություն կա նաեւ Պիղատոսի անձի ու վարմունքի միջեւ՝ Հիսուսի դատաքննության ժամանակ...

Ֆրանք Մորիսոնը, իր «Ո՞վ է տեղաշարժել քարը» (Who moved the stone?) խիստ ուսանելի գրքում, գիտակ մեկնաբանի իր նրբանկատությամբ ու խորաթափանց խուզարկուի հոտառությամբ, ճշգրտորեն վերականգնում է այդ դեպքերի ողբերգական ընթացքը. նա փաստում է այն, ինչն ինքն անվանում է «անհամապատասխանություն Պիղատոսի վարքի, ինչպես շարադրված է Ավետարաններում, եւ նրա բնավորության միջեւ, որը հայտնի էր ըստ իր անցյալ կյանքի», եւ հարց է տալիս. «Ինչո՞ւ Պիղատոսը, որ պատմությանը հայտնի է որպես բռնակալ, Ավետարանների մեջ նկարագրվում է որպես անվճռական մարդ»:

Պետք է ինչ-որ բան տեղի ունեցած լիներ այն ժամանակահատվածում, որը բաժանում է Կայափա–Պիղատոս տեսակցությունը ուրբաթ օրվա առավոտյան ունկնդրությունից: Շատ կարեւոր մի դեպք տեղի ունեցավ: Պիղատոսը հասկացավ, որ Հիսուսն արժանի է, որ իրեն լսեն, որ նա ավելին է, քան զինվորը քաղաքական շախմատի տախտակի վրա: Պիղատոսը աղոտ կերպով ինչ-որ բան էր կռահել այդ անհասկանալի կալանավորի մեծության մասին:

Ավետարանական հատվածները մեզ տալիս են երկու մանրամասն: Նախ եւ առաջ, դարձյալ ըստ Հովհաննու, Պիղատոսը ներկայացավ հրեաներին կալանավորին պալատի ներսը տանելուց հատո միայն: «Նրանք տարան Հիսուսին.... իրենք ներս չմտան, այդժամ Պիղատոսը դուրս ելավ նրանց առաջ»: Այստեղ որոշակի ժամանակ է անցնում: Շատ հնարավոր է, որ Պիղատոսը շատ է ցանկացել տեսնել կալանավորին, եթե նրան ուղիղ իր մոտ չէին բերել: Այստեղից էլ այդ երկուսի հանդիպման հնարավորությունը՝ Պիղատոսի՝ հրեաների մոտ դուրս գալուց առաջ:

Բայց Մատթեոսը (ԻԷ 19) մեզ ներկայացնում է մի նոր՝ շատ արժեքավոր մանրամասն: Դա կուսակալի կնոջ, որին, ավանդության համաձայն, անվանում ենք Կլաուդիա Պեկուլա (մինչդեռ, ըստ աշխարհիկ հատվածների, նրա անունը հայտնի չէ), ուղերձն

է: Արդ, ուրբաթ առավոտյան նա իր ամուսնուն մի թուղթ է ուղարկում, երբ նա արդեն նստած էր կառավարչի աթոռին: Այդ հապճեպ գրված լուրը մոտավորապես այսպիսի բառեր էր պարունակում. «Այդ մարդն անմեղ է. նրա մասին մի մղձավանջային երազ եմ տեսել. քեզ դժբախտություն կպատահի, եթե ձեռք տաս նրան»: Գուցե ավելի լավ կլիներ Մարսել Պանյոլի «Հուդա» ստեղծագործության բառերով ասել. «Ես մի սարափելի երազ տեսա.... Պարտեզում զինվորների մի խումբ էր առաջանում: Նրանք բերում էին ամբողջովին սպիտակ մի կալանավորի: Այդ մարդը շողշողում էր գիշերվա մեջ, ու նրա գլխի շուրջը ասես մի կլոր լույս լիներ, ոսկեգույն մի լույս... Իսկ հետո ամպրոպը գոռաց մի քանի անգամ, ու ես լսեցի ամբոխի ձայներ: Այդ մարդը կախված էր մի ծառից, եւ դու էիր նրան դատապարտել... Ես մոտեցա... սպիտակ մարդու պատկերն աղավաղվեց, ու նրա տեղում՝ խաչի վրա, դու հայտնվեցիր»: Այդպես էլ պիտի պատկերացնել Կլաուդիայի տեսիլքը:

Հնարավոր է, որ Մատթեոսը չի գտել այդ մանրամասնի ճշմարիտ տեղը: Նա այն հիշատակում է Պիղատոսի՝ կամ Հիսուսին, կամ Բարաբբային ազատ արձակելու առաջարկությունից հետո: Ուղերձն ընթերցողներին ցույց է տալիս, որ այն ոչ մի ազդեցություն չի գործում իր կառավարիչ ամուսնու վրա:

Իսկ գործը նորից խորապես քննելու որոշումը գուցե գալիս է իր այնքան սիրած կնոջ թղթի կտորից;

Մատթեոսը ոչ երկիմաստորեն ասում է. «Պիղատոսը նստած էր ատյանի վրա, երբ իր կինը նրան ուղարկեց սուրհանդակին....»: Արդ, Հովհաննեսը դատավորի ատյանի մասին հիշատակում է միայն դատավարության վերջին վայրկյաններին: Ըստ նրա՝ Պիղատոսը նստել էր բարձրադիր աթոռին, այսինքն՝ մարմարե սալաքարերով խճակերտ մի նստարանի վրա, միայն այն րոպեին, երբ պետք էր մահվան դատավճիռն արձակեր: Բայց Պ. Կորսենն աստվածաշնչյան գիտական մի պարբերականում նշում է, որ դատավորը պետք է նստեր ատյանին ունկնդրության համար: Բացի այդ՝ Կորսենը հավաստում է, որ հունարեն «նստել» բառը կարող է հասկացվել նաեւ «նստեցնել ինչ-որ մեկին»: Արդ, ամեն անգամ, երբ Պիղատոսը հայտնվում է ամբոխին, նստում է դատավորի ատյանին: ➥ *էջ 7, 8*

ԽՄԲԱԳՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Տարեմտյան ցանկություն

Քո տապալվող գմբեթների հետ
Դարեր ու դարեր տառապել եմ ես.
Մոխիր եմ ծամել ու ծամել փոշի,
Ու փոշու միջից նորից թեւել եմ.
Եվ քո ցայգի պես հարատեւել եմ...
Վահագն Դավթյան

Մեր ժողովուրդը հաճախ է իրեն համեմատում առասպելական փյունիկի հետ, մի թռչուն, որ ամեն անգամ ինքնայրումի կրակների, մոխիրների միջից հարություն է առնում՝ շարունակելու իր կյանքի հավերժական ընթացքը:

Փյունիկը նաեւ մեր Տիրոջ աստվածային բնության խորհրդանիշն է՝ հավերժական ու հարատեւ: Ի դեպ՝ ժամանակի ընթացքում փյունիկը դարձավ նաեւ մարդկային ոգու, ոգեղենության վերածնության խորհրդանիշ՝ նյութական աշխարհի դեմ մշտապես տարվող պայքարում:

Մեր ժողովրդի անցած երկար ու ձիգ ճանապարհը հենց փյունիկվելու, գոյապայքարի, ամեն անգամ ավերակների վրա նորը կառուցելու անկոտրում կամքի հաստատումն է:

Այսօր, ընդունենք թե չընդունենք, մենք կրկին կրակների ու մոխիրների, ծանր ու ծանրագույն կորուստների, հուսահատության ու ընկճախտի, հոգեկան ու նաեւ ֆիզիկական դեգերումների մեջ ենք, ուստի, մեր անցած ճանապարհի փորձառությունը հաշվի առնելով, պիտի փորձենք սկսել փյունիկվելու մեր գործընթացը: Իսկ դրա համար նախ եւ առաջ ազգովի պիտի խորհենք, թե արդյոք պատրա՞ստ ենք «ինքնայրումի», ասել է թե՝ ինքնամաքրումի, պատրա՞ստ ենք նյութապաշտության կործանարար կրքախտից բարձրանալու ոգու ու ոգեղենի լուսավոր սանդղակներով:

Այդ ճանապարհը հեշտին չէ, այդ ճանապարհը բարդ է ու աշխատատար, այդ ճանապարհը յուրաքանչյուրից՝ պաշտոնյայից մինչեւ շարքային, գիտնականից մինչեւ շինական, տարեցից մինչեւ մանուկ, այրերից մինչեւ տիկնայք պահանջում է լինել խիստ հանձնառու, նվիրյալ ու, եթե կուզեք, մահապարտ, այո՛, մահապարտ ոչ միայն ռազմի դաշտում, այլեւ առօրյա կյանքում, արարքներում, մտորումներում, երկիրը, հողը, ջուրը, ծառն ու ծաղիկն անմնացորդ ու անձնուրաց սիրելու եւ վերջապես ամենակարեւորը՝ հայրենակցին, դրկիցին, գործընկերոջն անկեղծորեն օգնելու, փայփայելու, աջակցելու, իր «հացից» բաժին հանելու աստվածահաճո գործերում: Ուզածդ կրակ սկսվում է կայծից: Թող այսօր այդ մաքրող, սրբագործող կայծը մենք լինենք՝ մեր սերունդը, մեր նոր «տնկին» ու «սածիլը»: Այս ապականված աշխարհում հանդգնենք կրկին դառնալու փյունիկվելու մաքրագործ կրակը, ինչպես դա արեցին մեր լուսավոր նախնիները՝ Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսավորիչը 301 թվականին՝ ձեռնոց նետելով ողջ հեթանոս աշխարհին, եւ աշխարհը հետեւեց մեզ: Դա մեր առաջին փյունիկումն էր՝ քաղաքակրթական մեր կողմնորոշումը, ինքնության մեր հիմնաքարը: Այո՛, քրիստոնեությունը մեզ համար միայն հավատի խնդիր չէր, քրիստոնեությունը մեզ համար կողմնորոշում էր՝ բարոյահոգեբանական, հոգեմտավոր, մշակութային, աշխարհայացքային:

Շատ ժողովուրդներ առ այսօր էլ իրենց գրավոր խոսքը շարադրում են հիմնականում լատիներենից փոխառված կամ փոքրինչ ձեւափոխված տառանիշներով: Մեր հայրերն էլ ժամանակին օգտվել են հունարեն ու ասորերեն այբուբեններից եւ դեռեւս կարող էին օգտվել, սակայն... կրկին մեր խորագետ, իմաստուն եւ հեռատես հայրերը՝ Վռամշապուհ արքան, սուրբ Սահակ Պարթեւ կաթողիկոսը, հանճարեղ վարդապետ Մեսրոպ Մաշտոցը, Բագրատունիների, Մամիկոնյանների, Արծրունիների, Սյունիների նախարարաց տները, ազգային, քաղաքական ու հոգեւոր միասնականության անուրանալի օրինակ դրսեւորելով, սատար կանգնեցին այդ աներեւակայելի, մեր ինքնության ամենաբախտորոշ գաղափարի իրականացմանը, եւ կյանք մտավ, ինչպես ասում են՝ «միս ու արյուն» առավ մաշտոցյան անկրկնելի գիրը, ինչը ոչ միայն մեր բանավոր խոսքն արձանագրելու միջոց դարձավ, այլեւ մեր տեսակը պատմության մեջ ամրագրելու, մեր ինքնության, մեր փյունիկվելու երկրորդ մարտահրավերը՝ եւ այն էլ ինչպիսի՜:

Հայոց պատմության փառավոր էջերից մեկը եղել եւ դեռեւս մնում է Ավարայրի ճակատամարտը: Քրիստոնեության ընդունումից անցել էր ընդամենը 150 տարի, սակայն հայոց համար այդ տարիները հավերժականի շունչ ու ոգի զգեստնեցին, քանզի Քրիստոսի Ավետարանի լույսը չափազանց հարազատ էր մեր ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ամբարած հոգեմտավոր կառույցին, նրա աշխարհճանաչողության տրամաբանությանը, տիեզերականի ընկալմանը: Մեկ օր տեւած ճակատամարտը զրադաշտական մեր հարեւանին ստիպեց հասկանալ, որ հայոց հնչեցրած «ո՛չ»-ը՝ հանուն հավատի եւ հայրենիքի, չճեղքվող ապառաժ է, ոգեղենության անսպառ էներգիա, մահն արհամարհող ապրելու կամք, ոչ թե պարզապես ապրելու, այլ որպես հայ քրիստոնյա, որպես Քրիստոսի լույսի որդիներ ապրելու ժայռածին կամք: Մեկ օր տեւած այս պատերազմը Պարսկաստանի պատմության մեջ նույնիսկ հպանցիկ արձանագրում չունեցավ, սակայն մեզ համար այն եղավ դարերի մեջ հային Հայ պահելու, արժանապատիվ ապրելու դպրոց ու դարբնոց:

Գործ՝ Հ. Կոջոյանի

Քրիստոնեության ընդունում, գրերի գյուտ եւ Ավարայր...

Երեք իրադարձություն, ինքնության երեք հիմնաքար, եւ երեքն էլ տեղի ունեցան հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների, երեւելիների ու ողջ ժողովրդի ազգային կատարյալ միասնականության, համաձայնության դրսեւորման շնորհիվ: Մենք թեպետ «փոքր ածու» ենք, բայց մեզ տրված է մի զորություն, որ բռունցքվելու դեպքում դառնում ենք անհաղթելի: Այդ մասին քաջ գիտեր նաեւ հայ մեծ բանաստեղծ, հայ մեծ «մահապարտ» Եղիշե Չարենցը, երբ հրամանի պես պատգամում էր. *«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»*: Ուրեմն՝ եկեք մի կողմ դնենք մեր «սեւն ու սպիտակը», «նախկիններն ու ներկաները», զանազան ու զարմանազան պիտակավորումները, միմյանց ոչնչացնելու, արհամարհելու, ոտնատակ տալու անփառունակ պահվածքը եւ լծվենք բռունցքվելու գործին, այս ամոթալի վիճակից վերստին հառնելու որպես առաքինի, բարոյապես կայուն, բարեկիրթ, գիտական ու մշակութային ահռելի ժառանգություն ու պոտենցիալ ունեցող, հերոսական ժողովուրդ:

Այսօր այնպիսի վիճակ է մեր երկրում, որ մեզ այլեւս օտար թշնամի հարկավոր չէ, մեր մեծագույն թշնամին հենց մենք ենք՝ մեր անխոհեմությամբ, անհեռատեսությամբ, անհանդուրժողականությամբ: Արդեն իսկ բզկտված, հուսահատության գիրկն ընկած մեր ժողովրդին ոչ թե վերստին բզկտել է պետք՝ նրան մասնատելով բազում կուսակցությունների, խմբավորումների, գաղափարազուրկ «գաղափարախոսությունների», սոսկ անձնական նկրտումների միջեւ, այլ՝ համախմբում, համախմբում վասն մեկ կենսական ու հույժ կարեւոր նպատակի՝ հայրենիքի վերաշինության, հզորացման տեսլականի:

Հայոց հարգարժան այրեր ու տիկնա՛յք, վասն ձեր պատվամոլության մի՛ ոչնչացրեք մեր ազգային, քաղաքական ու հոգեւոր ինստիտուտները, մի՛ ջարդեք ազգի եւ երկրի ողնաշարը, մեր զավակների ապագան մի դարձրեք ծաղր ու ծանակի առարկա ոչ միայն թշնամու, այլեւ ողջ մարդկության համար: Ես ամաչում եմ, շատ եմ ամաչում մեր այս վիճակից, իսկ դո՞ւք...

Պատմությունը դաժան է, պատմությունը ոչ մեկին չի ներում: Եթե այսօր չսթափվենք, պատմությունը մեր սերնդին ու մեր երկիրը կհիշի որպես ազգային արժեքներից ու նպատակներից զուրկ նյութապաշտների, թալանչիների, անբարոյականների, տգետների, լավագույն դեպքում՝ առուծախով զբաղվող մի հանրության, որն իր գոյությունը քարշ էր տալիս «որտեղ հաց՝ էնտեղ կաց» նվաստացուցիչ սկզբունքով:

Ուստի՝ եկե՛ք այսօր՝ այս նոր տարուց, ի մահ կանգնյալ, ի զեն հնչյալ՝ սկսենք մեր վերաարթնացումի, վերազարթոնքի, վերամիավորումի գործընթացը, վերստին բռնենք մերազնյա ու մեզապատկան փյունիկվելու դժվարին, բայց հույժ պատվաբեր ուղին: Թող մեր Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեզ օգնական:

Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՊԻՂԱՏՈՍԸ

↩ էջ 6

Բայց վերջում, երբ Կայափայի ու նրա խմբի նենգամիտ ամբաստանությունն իրեն հասցնում է ծայրահեղության, ու երբ Հռոմում իրեն մերկացնելու միջոցով իր պաշտոնը, գուցե նաեւ կյանքը կորցնելու երկյուղի մեջ է Պիղատոսը, որոշում է տեղի տալ, նա վրեժ է լուծում. Հիսուսին նա նստեցնում է սեփական գահին՝ հրեաներին ծաղրելու համար. ահա՛ ձեր թագավորը՝ «գահընկեց արված», ինչը հարուցում է գազանային ամբոխի գոռում-գոչյունների մի նոր ալիք (ոչ միայն՝ «խաչի՛», այլեւ՝ «հանի՛ր, հանի՛ր նրան այդտեղից»): Ու այդ պահին է, որ Կլաուդիայի ուղերձը պիտի հասած լիներ իր ամուսնուն՝ նրան դրդելով փոխել իր վերաբերմունքն ու հարցաքննություն կատարել՝ բոլոր կանոններին համաձայն:

Կլաուդիա Պրոկուլայի մղձավանջային երազն ապացուցում է Պիղատոսի արքունիքում առկա «քրիստոնեական ազդեցությունը»: Երազում տեսնում ենք միայն նրանց, ովքեր մեզ մտահոգում են: Այդ հռոմեացի կինը, որ ասում են, թե կայսեր թոռնուհին էր, հանդիպե՞լ էր Հիսուսին կամ լսե՞լ էր նրան ուղեկցողներից որեւէ մեկին: Ամեն դեպքում նա տեղեկացված էր Կայափայի մտադրության մասին եւ ինչո՞ւ նախորդ օրերին ճնշում չէր գործադրել իր ամուսնու վրա:

Փաստն այն է, որ Պիղատոսը փոխվում է:

Նա խորապես քննում է կալանավորի գործը: Ու դա հիմնականն է մարդկանց փրկության համար: Քանզի Հիսուս Քրիստոսի երկու խաղաղ ու լուսավոր հատկությունները՝ անմեղությունն ու հնազանդությունը, բացահայտվում են քաղաքացիական դատավարության ընթացքում:

Իր կալանավորին քննելու համար Պիղատոսը վերադառնում է դատարանի դահլիճ ու հարցաքննում Հիսուսին, որ բացատրություններ է տալիս: Եթե նա հեղափոխական է, ապա հոգեւոր իմաստով եւ ո՛չ քաղաքական: Իր գալով՝ Աստված բարձրաձայն հայտնում է Իր սիրո մասին, ու այդ սերը տապալում է ատելությունը, նորոգում կյանքերը: Այո՛, Ավետարանը վտանգավոր է հարմարավետության, եսասիրության, ուրիշին արհամարհելու տեսանկյունից. բայց այն բոլորովին ուրիշ մի հեղափոխություն է, քան այն մեկը, որի մասին խոսում են զելոտները: Այդ վերջին կետը Պիղատոսը լավ է հասկանում: Այդ պարզամիտը, որ այնքան քաջարի է, այդ մեղմ էակը, որ այնքան վճռական է, արժանի չէ մահվան: Ու Պիղատոսը բարձրաձայն ազդարարում է նրա անմեղության մասին: Նույն նախադասությունը երեք անգամ կրկնվում է Հովհաննեսի Ավետարանում. «Ես նրա մեջ դատապարտելի ոչ մի բան չեմ գտնում»: Ղուկասը պնդում է, որ այդ հավաստումը ներկայացվել է երեք անգամ: Ինչ Մատթեոսին է վերաբերում, ապա նա երեք անգամ նկարագրում է Պիղատոսի հանրահայտ արարքը՝ ձեռքեր լվանալը: Նա իրեն հեռացնում է իր սեփական դատավճռից. նա դրա պատասխանատվությունը դնում է ողջ ժողովրդի վրա. սեփական արդարացումն ապացուցում է, թե որքան էր արդարացի ամբաստանյալը. արյունը, որ պիտի հոսի, ձյունից էլ սպիտակ մարդու արյուն է: ➥ էջ 8

Բիոէթիկայի եւ իրավագիտության զարգացման հեռանկարները 21-րդ դարում

↩ *էջ 5*

Առաջին խումբ հարցերն էին բիոէթիկայի հասկացութային ապարատի տեսական հենքը, առողջության եւ հիվանդության, կյանքի եւ մահվան, մարդու եւ անձի հասկացությունները: Երկրորդ խումբ հարցերն առնչվում էին մարդու գոյության ծայրահեղ եւ ոչ ստանդարտ իրավիճակներին՝ ծնունդ եւ մահ, հիվանդություններ, օրգանների փոխպատվաստում: Երրորդ խումբ հարցերը վերաբերում էին մարդու կենսաբանական բնույթի միջամտությանը, որը հաճախ թելադրված էր նրա առողջությամբ: Չորրորդն ընդհանուր բնապահպանական ուղղվածության հարցերն էին. շրջակա միջավայրի պահպանությունը, կենդանիների պաշտպանությունը: Հինգերորդ խումբ հարցերը վերաբերում էին սոցիալական անհնազանդությանը, հայրավարությանը (paternalism), արդարության եւ ապագա սերունդների նկատմամբ բարոյական պատասխանատվությանը (*Encyclopedia of Bioethics. N. Y., 1978. http://www.onlinedics.ru/slovar/soc/b/bioetika.html* (25.01.2016)): Ինչպես նկատում ենք, ԱՄՆ-ում բիոէթիկան ընդգրկում է ուսումնասիրվող հարցերի լայն շրջանակ:

Բժշկական դաշտում բիոէթիկայի կարգավորման առավել ընդհանրական հարաբերություններն են՝ 1. բժիշկ–այցելու փոխհարաբերությունները, 2. բժշկական ոլորտի մասնագետ աշխատակիցների ներքին ուղղահայաց փոխհարաբերությունները (վարչական ստորաբաժանումների, բժշկի եւ բուժանձնակազմի հարաբերությունները), 3. բժշկական ոլորտի մասնագետների ենթախմբերի ուղղահայաց հարաբերությունները (վիրաբույժ ուռուցքաբան-գինեկոլոգ եւ այլն), 4. բժշկական պրակտիկայում սեփականության եւ շահույթի հարաբերությունները, 5. բժշկական օգնության էսթետիկ նորմերը, 6. գիտության նոր ձեռքբերումների եւ դրանք բժշկական պրակտիկայում օգտագործելու չափանիշները, 7. իր առողջության նկատմամբ այցելուի բարոյական կարգավիճակը եւ այլն (*Воробьёва Л. В. Медицинское право: учебное пособие. Тамбов: Изд-во ГОУ ВПО ТГТУ, 2010. с. 13*):

Բիոէթիկայի ուսումնասիրության առարկայի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումները վկայում են ոլորտի համընդգրկունության մասին, որոնք դեռեւս համալիր ուսումնասիրության եւ հստակեցման կարիք ունեն: Արտասահմանյան գրականության մեջ ակտիվորեն քննարկվում է նաեւ իրավունքի եւ բիոէթիկայի փոխհարաբերակցությունը, ընդսմին խոսվում է նոր իրավաբանական տեսության, այն է՝ բիոիրավագիտության եւ նոր իրավունքի ծյուղի՝ բիոիրավունքի կայացման մասին (այս մասին՝ ստորեւ):

Իրավագիտության եւ բիոէթիկայի սիներգետիկան

Խորհրդային եւ հետխորհրդային ժամանակահատվածում իրավաբանական հետազոտություններն առավելապես նպատակաուղղված են պոզիտիվիստական հենքի վրա մեկնաբանելու գործող իրավունքը (օրենսդրությունը):

Խորհրդային իրավագետները հասարակական նշանակության շատ հարցեր դիտարկում էին իրավագիտության ուսումնասիրության առարկայից դուրս, այլ գիտությունների՝ փիլիսոփայության,

աստվածաբանության, բժշկության, քաղաքագիտության տիրույթում եւ բռնելով կրավորական կեցվածք՝ ձեռնպահ էին մնում ներքաշվելու հատկապես հասարակության համար բաց նշանակություն ունեցող հարցերը (կյանքին եւ մահվանը, ընտանիքին, ամուսնությանը վերաբերող ոչ ստանդարտ հարցերը) քննարկելուց: Նրանց պատկերացմամբ իրավաբանը պետք է լոկ իրավաբանորեն գրագետ ձեւակերպի նշված հարցերի վերաբերյալ փիլիսոփաների, բժիշկների, աստվածաբանների եւ քաղաքական գործիչների ձեռքբերած հնարավոր համաձայնությունները: Նման մոտեցումը ոչ այլ ինչ է, քան իրավագիտությունը ստրկացնելու խորհրդային մտածողության շարունակություն: Ավելին՝ երբ անհրաժեշտություն է առաջանում իրավական կարգավորման ենթարկել իրավաբանին «օտար եւ անծանոթ» հարաբերություններ (օրգանների փոխպատվաստում, փոխնակ մայրություն եւ այլն), ապա այս դեպքում իրավագիտությունը, չունենալով համապատասխան գործիքակազմ, պատրաստ չէ բովանդակային քննարկումների, որի արդյունքում իրավաբանը ձեռք է բերում պարզապես իրավական տեխնիկայի կանոնները պահպանողի, իսկ լավագույն դեպքում՝ զարգացած պետությունների համանուն օրենքները թարգմանողի կարգավիճակ:

Համամիտ ենք այն մոտեցմանը, որ իրավաբանական գիտությունը տարվել է միայն իրավաբանական-դոգմատիկ ուսումնասիրություններով՝ անցնելով բժշկության, կենսաբանության, մոլեկուլային ինժեներիայի հիանալի բացահայտումների եւ նրանց հետ կապված մարդու իրավունքների եւ արժանապատվության հարցերի կողքով (*Ковалев М. Х., Генетика человека и его права (юридические, социальные и медицинские проблемы). Государство и прави, 1994. №1. с. 15*):

21-րդ դարի մարտահրավերների համատեքստում խիստ կարեւոր են տարբեր գիտությունների մասնագետների միջգիտական բնույթի երկխոսությունները: Բիոէթիկան փիլիսոփայության, բժշկության եւ իրավագիտության ոլորտի մասնագետների երկխոսության հիանալի դաշտ է: Ինչքան էլ տարբեր են նշված մասնագետների փաստարկումների բնույթը եւ հանրային ու մասնավոր շահի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, միեւնույն է, նրանց միջեւ երկխոսությունը չունի այլընտրանք:

Շարունակելի

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

ՄԱՐԿ ԿՈՒՐԵՐ

ՊԻՂԱՏՈՍԸ



↩ *էջ 6, 7*

Հիսուսի մահվանից առաջ պետք էր հռոմեացի կառավարչի այդ բարձրաձայն ու հստակ ազդարարությունը: Միայն անմեղը կարող է կրել ուրիշի մեղքն իր վրա: Մարդկանց մեղքն իր վրա վերցնելու համար պետք է, որ նա իր մեջ տեղ ունենա, որպեսզի այն ընդունի: Ինչպե՞ս նա կարող էր իր վրա վերցնել մեզ հասնող դատապարտությունը: Հիսուս կարողացավ քավել մարդկության մեղքը, քանզի մեռավ որպես Սուրբ ու Արդար: Բայց անմեղության հրապարակավ այդ ազդարարումը մեզ համար բացահայտում է Հիսուսի հնազանդությունը նաեւ: Եթե դատավորն ընդունել է հայցի անհիմն լինելը, Հիսուսը չպիտի՞ կարողանար, եթե ուզենար, հասնել իր արդարացմանը: Երբ ուշադիր ես ընթերցում Ավետարանների հատվածները, ստիպված ես պատասխանել դրականորեն: Տպավորված իր կնոջ ուղերձից, հետաքրքրված Հիսուսի վարվելակերպով՝ Պիղատոսը կալավնավորի հանդեպ անժխտելի համակրանք է տածել: Սե՞ր կամ բարեկամությո՞ւն: Թերեւս դա շատ կլիներ: Բայց Պիղատոսը Հիսուսի լավն է կամեցել: Հովհաննեսը դա ասում է աներկբայորեն. «Սրանից հետո Պիղատոսը ուզում էր նրան ազատ արձակել»: Այս նախադասությունը գտնվում է նիստի վերջում, դատավորի ու ամբաստանյալի միջեւ երկրորդ ու վերջին խոսակցությունից հետո: Բայց դրանից էլ առաջ Պիղատոսը փորձել է ազատել Հիսուսին: Այն ժամանակ նա օգտվել էր հնարքներից՝ հասարակական կարծիքն իր ուզած ձեւով ուղղորդելու համար: Հիսուսին ներելու առաջարկությունը, ըստ զատկական սովորության, ուրիշ նպատակ չուներ: Բայց հրեաները նախընտրում են Բարաբբային, որը սպանության մասնակից էր: Այդժամ Պիղատոսը վերադառնում է իր պարտականությանը: Հիսուսին մտրակել է տալիս ու նրան ներկայացնում ամբոխին՝ հուսալով, որ խաչելության նման նախնական եղանակի ցնցող տեսարանի (նվաստացում, ցավ, արնաշաղախություն) միջոցով կկարողանար սթափեցնել կատաղությունից արբած ամբոխին: Այստեղ եւս խուսանավումը ձախողվում է: Հերովդեսի մոտ ուղարկելը, որի մասին պատմում է Ղուկասը, Հիսուսին պետք է տար ազատվելու հնարավորություն: Դարձյալ սխալ հաշվարկ: Այդ ժամանակ Պիղատոսը որոշում է ազատ արձակել Հիսուսին առանց խորամանկության կամ ձեւեր թափելու, բայց դա իրեն չի հաջողվում:

Կայափայի՝ «մենք կգնանք Հռոմ» խոսքերի պատճառով: Նաեւ: Բայց, մանավանդ, այն բանի համար, որ Հիսուսն ինքը դա չուզեց: Հիսուսը չի ուզում օգտվել հռոմեական դատավորի բարի մտադրություններից: Ձիթենյաց պարտեզում նա որոշեց նվիրաբերել իր կյանքը: Մաքառելով մինչեւ վերջ՝ նա տալիս է իր կյանքը. քանզի գիտի, որ ինքն առաքելություն է կատարում, ու այդ չափից դուրս մարդկային դատավորից անդին, որին գերազանցել են իրադարձությունները, նա տեսնում է Մեծ Դատավորին՝ Աստծուն: Ինչպես Լութերն է ասում. «Պիղատոսն Աստծու ծառա է՝ առանց դա հասկանալու»: Այդ անօրինական դատավորի միջոցով Աստված՝ Իրական Դատավորը, դատապարտում է Իր Որդուն, որ անմեղ է, բայց մեղավոր՝ մեր մեղքերով, որ նա իր վրա է վերցրել: Դատավճիռը, որը դուրս է գալիս Պիղատոսի բերանից, այն նույն դատավճիռն է, որն Աստված է կայացրել, բայց ոչ մեր դեմ. դատապարտությունն իր Որդուն է վերաբերում, որ իրեն դրել է մեր փոխարեն:

Սա է այս արտասովոր պատմության իմաստը: Պիղատոսը հերո՞ս է արդյոք: Ո՛չ: Նա մարդ է՝ իր փոխզիջումներով, տատանումներով, կտրուկ շրջադարձերով: Ու այդ մարդուց վեր կա Աստված. «Դու ոչ մի իշխանություն չէիր ունենա ինձ վրա, եթե այն քեզ տրված չլիներ վերեւից» (Հովհ. ԺԹ 11), որ իրականացնում է իր ծրագրերը՝ աշխարհի փրկության համար:

Իր երազի մեջ, պատմում է Մարսել Պանյոլը, Կլաուդիան տեսնում էր, թե ինչպես խաչված Հիսուսի պատկերն աղավաղվում է, ու փայտի վրա հայտնվում է Պիղատոսը: Մենք կարող ենք շրջել պատկերը. փայտի վրա դատապարտվածը, դատվածը, մահապատժի ենթարկվածը մենք պիտի լինեինք՝ աշխարհի բոլոր պիղատոսների հետ (քանզի բոլորս գործում ենք անարդարությունները), բայց պատկերն աղավաղվում է: Ո՛չ, այլեւս ես չեմ լինի այնտեղ: Իմ տեղը զբաղեցված է, քանզի իմ փոխարեն այն զբաղեցրել է Հիսուս Քրիստոս:

Ու այժմ ես պետք է կարողանամ ապրել ազատ արդարացվածի, ներվածի կյանքով ու կաշխատեմ, գոնե մի փոքր, ճառագել այն սիրուց, որի մասին Աստված ինձ վկայում է Հիսուս Քրիստոսով:

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 17.01.2022 թ.
Տպաքանակը՝ 1225